*.Ջրամատակարարում և ջրահեռացում*

Կատարվել է Երևանի Կենտրոն վարչական շրջանի թիվ 10 ՆՈՒՀ-ի շենքի սանհանգույցերի տեղազննում, որի հետևանքով պարզվել է, որ.

ա. ՆՈՒՀ-ում գոյություն ունեն թվով 5 սանհանգույց, որից N4-ը նախատեսվում է սույն նախագծով աշխատակազմին ծառայելու նպատակով, 1 խոհանոց, պահեստում 1 լվացման սենյակ,

բ. սանհանգույցները գտնվում են բարվոք վիճակում,

գ. լվացարակոնքերը և զուգարանակոնքերը ենթակա են փոխարինման,

դ. զուգարանակոնքերի լվացման բաքերը նորմալ չեն շահագործվում,

ե. խողովակները փոխարինված են պլաստիկ խողովակներով,

զ. ՆՈՒՀ-ի կոյուղագծերը միանում են բակում գտնվող կոյուղու հորերին, որոնք գտնվում են նորմալ վիճակում:

Վերանորոգման ծրագրի շրջանակներում ներառված են հետևյալ աշխատանքները.

ա. սանհանգույցների սանիտարական սարքերի տեղադրում(զուգարանակոնքերի լվացման բաքերից առաջ նախատեսված են Ф15 փականներ),

բ. սանհանգույցներին կից պահարանով խոհանոցային լվացարանակոնքերի փոխարինում,

գ. խոհանոցում պահարանով լվացարանակոնքերի փոխարինում,

ե. նկուղային մասում նախատեսվում է փոխարինել ջրամատակարարման խողովակները, սնուցումը իրականացնել նկուղային հարկում գոյություն ունեցող ջրագծից՝ պոլիպրոպիլենե de32- de20մմ խողովակներով:

զ. ջրահեռացման խողովակների փոխարինում միայն N4 սանհանգույցից մինչև նկուղային մասը ներառյալ:

է. սանհանգույցներում, խոհանոցում և լվացման սենյակում նախատեսվում են լվացման ծորակներ:

ը. Նկուղային մասում նախատեսվում է ջրամատակարարման խողովակների ջերմամեկուսացումն իրականացնել հանքաբամբակով:

թ. Նկուղային մասում նախատեսվում է կոյուղու գոյություն ունեցող և նախագծվող ջրամատակարարման խողովակները ամրացնել առաստաղից՝ խամութների միջոցով:

Ստորև բերված են բոլոր սանհանգույցներում կատարվող աշխատանքները`

1. ԽՈՀԱՆՈՑ

- թվով 2 պահարանով խոհանոցային երկտեղ լվացարանակոնքի մոնտաժում,
- լվացման ծորակի տեղադրում

2. I ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

- թվով 2 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 լվացարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 պահարանով խոհանոցային երկտեղ լվացարանակոնքի մոնտաժում,
- լվացման ծորակի տեղադրում:

3. ԼՎԱՑՄԱՆ ՍԵՆՅԱԿ

- թվով լվացարանակոնքի մոնտաժում,
- լվացման ծորակի տեղադրում:

4. II ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

- թվով 2 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 լվացարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 պահարանով խոհանոցային երկտեղ լվացարանակոնքի մոնտաժում,
- լվացման ծորակի տեղադրում:

5. III ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

- թվով 2 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 լվացարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 պահարանով խոհանոցային երկտեղ լվացարանակոնքի մոնտաժում, լվացման ծորակի տեղադրում:

6. IV ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

- թվով 1 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 լվացարանակոնքի մոնտաժում,
- լվացման ծորակի տեղադրում:

7. V ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

- թվով 2 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 լվացարանակոնքի մոնտաժում,
- թվով 1 պահարանով խոհանոցային երկտեղ լվացարանակոնքի մոնտաժում,

լվացման ծորակի տեղադրում: